	<b>«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ</b>	Խմբագրություն 3  Ուժի մեջ է՝ 16.09.2019թ-ից
<b>ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԶՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ</b>		

Գործունեության տեսակների ցանկ, որոնք չեն ֆինանսավորվում Ամերիաբանկի կողմից Ամերիաբանկի և ՎՋԵԲ-ի, ՄՖԿ-ի և ՆՋՖԿ-ի միջև կնքված պայմանագրերի շրջանակներում.

1. Բանկը չի ֆինանսավորում այնպիսի ապրանքների արտադրություն, առևտուր կամ կիրառում, որոնք արգելված են Հայաստանի Հանրապետության օրենքներով կամ միջազգային պայմանագրերով:
2. Առանց սահմանափակելու վերը նշված ընդհանրացված սահմանումը, բանկը նաև չի ֆինանսավորում կամ հաստատում հետևյալ գործունեության համար նախատեսվող վարկերը:

ա) Արտադրություն կամ գործունեություն, որտեղ օգտագործվում է հարկադիր աշխատուժ<sup>1</sup> կամ մանկական աշխատուժ, և որը կրում է վնասակար<sup>2</sup> կամ չարաշահող բնույթ, որտեղ խտրականություն է գործադրվում կամ խախտվում է աշխատակիցների՝ արհմիություններին և այլ միություններին միանալու օրինական իրավունքը:

բ) Այնպիսի ապրանքների արտադրություն կամ առևտուր, որոնք արգելված են այն երկրի օրենքներով, որտեղ ծավալվում է գործունեությունը, կամ միջազգային պայմանագրերով: Այդ ապրանքների թվում են, օրինակ, դեղորայքը, պեստիցիդները և հերբիցիդները, օգոնային շերտի քայքայմանը նպաստող նյութերը, պոլիքլորացված դիֆենիլը, վայրի բնությունը կամ վայրի բնության ապրանքները, որոնք կարգավորվում են CITES<sup>3</sup> կոնվենցիայով:

գ) Միջազգային օրենքներով արգելված թափոնների տեղափոխում այլ երկրներ:

դ) Չենքի և զինամթերքի, ոգելից խմիչքների կամ ծխախոտի (գարեջրի և զինուրացառությամբ)՝ արտադրություն կամ առևտուր<sup>4</sup>:


ե) Խաղատներ և այլ շահումով խաղեր<sup>4</sup>:

զ) Ռադիոակտիվ նյութերի արտադրություն կամ առևտուր<sup>5</sup>:

է) Անմշակ ասբեստի թելքի արտադրություն կամ առևտուր<sup>6</sup>:

ը) Գործունեություն, որն արգելված է երկրի օրենսդրությամբ կամ կենսաբազմազանության պաշտպանությանը վերաբերող միջազգային պայմանագրերով, կամ բնական կլիմայի/միջավայրի փոփոխությանը կամ վատթարացմանը նպաստող գործունեություն, ինչպես նաև պատմամշակութային հուշարձանների վնասմանը կամ փոփոխմանը նպաստող գործունեություն<sup>3</sup>:

թ) Ծառահատում առևտրային նպատակներով արևադարձային խոնավ անտառներում:

	<b>«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ</b>	Խմբագրություն 3  Ուժի մեջ է՝ 16.09.2019թ-ից
<b>ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԶՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ</b>		

ժ) Փայտի կամ այլ անտառային ապրանքների արտադրություն կամ առևտուր, բացառությամբ անտառային տնտեսության ոլորտում կայուն կերպով օգտագործվող և կառավարվող անտառների:

ի) Առևտուր վայրի բնությամբ կամ վայրի բնության ապրանքներով, որոնք կարգավորվում են CITES կոնվենցիայով (Convention on International Trade in Endangered Species or Wild Fauna and Flora)<sup>3</sup>:

լ) Ծովում ձկան որս դրիֆտերային ցանցերով, որոնք ունեն 2.5 կմ ավել երկարություն:

խ) Նավթի կամ այլ վտանգավոր նյութերի տեղափոխում տանկերներով, որոնք չեն համապատասխանում ծովագնացության միջազգային կազմակերպության (IMO) պահանջներին:

ծ) Առևտուր առանց արտահանման կամ ներմուծման անհրաժեշտ թույլտվության կամ համապատասխան երկրից արտահանման, ներմուծման կան տեղափոխման արտոնման այլ ապացույցի:


կ) Գործունեություն՝ կապված պորնոգրաֆիայի և մարմնավաճառության հետ:

հ) Ռասիստական և հակադեմոկրատական պարբերականների պատրաստում և տարածում:

ձ) Բնիկ ժողովուրդների տեղահանմանը նպաստող գործունեություն:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

1. «Հարկադիր աշխատուժ» նշանակում է ցանկացած աշխատանք կամ ծառայություն, որը կատարվում է ոչ թե անհատի սեփական կամքով, այլ ուժի կամ պատժի սպառնալիքի ազդեցությամբ:
2. «Մանկական վնասակար աշխատուժ» նշանակում է չարաշահում տնտեսական առումով կամ գործողություն, որը կարող է խոչընդոտել երեխայի կրթությանը, վնասել երեխայի առողջությանը կամ ֆիզիկական, մտավոր, հոգևոր, բարոյական կամ սոցիալական զարգացմանը:
3. CITES՝ «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական և բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիա: CITES կոնվենցիայում ներառված բուսատեսակների և կենդանատեսակների ցանկը կարելի է ստանալ ՀՀ բնապահպանության նախարարությունից:
4. Այս ցանկում չեն դասվում այն նախագծերն/ծրագրերն, որոնք չունեն զգալի ներգրավվածություն նման գործունեություններում: «Չունեն զգալի ներգրավվածություն» նշանակում է, որ նշված գործունեությունը

	<b>«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ</b>	Խմբագրություն 3
<b>ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԶՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ</b>		

հանդիսանում է նախագծի հովանավորի հիմնական գործունեության օժանդակ գործունեություն:

5. Սա չի վերաբերում բժշկական սարքավորումներին, որակի վերահսկման (չափման) կամ որևէ այլ սարքավորումներին, որոնց մեջ ռադիոակտիվ նյութերի աղբյուրն՝ ըստ IFC-ի աննշան է կամ անհրաժեշտ կերպով պաշտպանված:
6. Բացառությամբ մշակված ասբեստացեմենտային թերթերի, որտեղ ասբեստի պարունակությունը 20% ցածր է: